ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1956 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում զբաղվեց վերջերս Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռից ներս ստեղծված կացության վերաբերյալ հարցերով։

1956 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում նորից զբաղվեց Երուսաղեմի խնդրով, այս հարցի վերաբերյալ նոր փաստաթղթերի և նամակագրական նյութերի հիման վրա։

Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը Գերագույն Հոգևոր Խորհրդի այս նիստում հայտնեց այն մասին, որ Ինքը Տ. Եղիշե արքեպիսկոպոսի հետ ունեցած խոսակցության ընթացքում նոյեմբերի 4-ին թելադրել է նրան, Հայ եկեղեցու ընդհանուր շահերից ելնելով, հրաժարվել Ս. Աթոռում ունեցած իր պաշտոններից և չվերադառնալ առհասարակ Երուսաղեմ։

Տ. Եղիշե արքեպիսկոպոսը հիմնականում համամիտ է եղել Վեհափառ Հայրապետի թելադրության և խոստացել է որոշ ժամանակի համար քաշվել ամեն գործից։

1956 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում գոհունակությամբ լսեց Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետի մանրամասն հաղորդումը Երուսաղեմի Պատրիարքարանից ներս Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության մեջ տիրող ներկա կացության մասին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի նույն նիստում լսվեց նաև Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի 11 էջից բաղկացած զեկուցագիրը (զեկուցող՝ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Գրիգոր Բեքմեզյան)։

Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռի Վեր-

ստուգիչ հանձնաժողովը սույն թվականի հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 20-ը կատարեց Մայր Աթոռի 1956 թվականի հունվար — հունիս ամիսների անտեսա-ֆինանսական գործունեության հերթական ստուգումը և դեկտեմբերի 14-ին այն ներկայացրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, լսելով 1956 թվականի առաջին կիսամյակի գործերի ստուգման արդյունքների մասին Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցագիրը (հաշվապահություն, Հոգևոր ճեմարան, «Էջմիածին» ամսագիր, դրադարան, պահեստ, հաշվարան), որոշեց հիմնականում հաստատել Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, հանձնաժողովի դիտողություններով, եզրակացություններով և առաջարկություններով հանդերձ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում քննեց նաև Ս. Գեղարդ վանքի ժամասաց Տ. Վաղարշակ քահանա Բաղումյանի վանական անկարգապահության և անհնազանդության հարցը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով Տ. Վաղարշակ քահանան փիրմանագրվեց երեք ամսվա ժամանակով։